



ՈՍԿԵ ԼՈՒՄԱ

«Հայաստան, հայ ժողովուրդ,
հայոց պատմությունը իրարմե
անբաժան են և միասին անբա-
ժան են Սուրբ Էջմիածնեն»:

ՎԱԶԳԵՆ Ա.

Օտարերկրյա շատ պատվիրակություն-
ների են ուղեկցել դեպի Էջմիածին ու եղել
Մայր տաճարում, գանձատանը, Վեհափա-
ռի մոտ և, հասկանալի է, միշտ էլ հետա-
քըրքիր գրույցներ ունեցել հոգևոր մթնո-
լորտի թելադրած վերերկրային նյութերի
շուրջ: Սակայն ոչ մի երկրի պատվիրա-
կություն այնպես խոր չի տպավորել ինձ,
ինչպես Ֆրանսիայի պատվիրակությունը,
գլխավորությամբ լիցեյների ընդհանուր
տնօրեն, մասնագիտությամբ մաթեմատիկ
պարոն Այքեր Դյուրանի: Իր երկու օգնա-
կանների՝ պարոն Բյուֆոնի և պարոն
Բերտրանի հետ եկել էին ծանոթանալու
միջնակարգ ուսուցման դրվածքին Սովե-
տական Հայաստանում:

Ինձ Երևանի օղանավակայանի սպաս-
ման սրահում, պարոն Դյուրանը ֆրանսիա-
կան հաճելի անմիջականությամբ հայտնեց.

— Փարիզում մտավորական հայ բարե-
կամներ ունեմ. նրանք շատ են պատմել ինձ
ձեր ժողովրդի հինավուրց պատմության և
հարուստ մշակույթի մասին: Բացի այդ,
կարդացել եմ, ինչ որ ճարել եմ, և սուաջին
հերթին Արշակ Զուպանյանի մեծարժեք
հրատարակությունները: Ինձ լրջորեն հե-
տաքրքրում են ձեր գրչագիր մատյանները
մաթեմատիկայի և աստղագիտության վե-

րաբերյալ: Այս ամենի հետ անձնական ծա-
նոթությունը ինձ համար վաղուց անհրա-
ժեշտություն է դարձել: Եվ երբ առիթը ներ-
կայացավ գալ ձեր մեծ երկիրը, ես մատու-
դրի Հայաստանի վրա: Եվ, ահա՛, ինչպես
տեսնում եք, ձեր հինավուրց հողի վրա եմք,
ձեզ հետ, վեհապանձ Արարատի հետ: Ան-
կեղծ ասեմ. ես ու իմ օգնականները մի
տեսակ շփոթված եմք. մինչև բիրիական
ժամանակները հասնող ձեր երկրի պատ-
մությունը ակամա հուզում է մեզ: Նայում
ենք մեր շուրջ բոլորը և ասում մտու՛ի.
«Այստե՛ղ, ամեն բան որ տեսնում ես, պատ-
մական է»:

Ֆրանսիայի պատվիրակությունը յոթ օր
մնաց Հայաստանում և մասնագիտական
զբաղվածությունից ազատ ամբողջ ժամա-
նակ շրջեց Երևանում, հանրապետության
տարբեր քաղաքներում ու շրջաններում, ե-
ղավ ուսումնական հաստատություններում
ու մշակութային օջախներում, հանդիպեց
տարբեր զբաղմունքի տեր մարդկանց հետ,
հարցրեց, վիճեց, զարմացավ և նորից
հարցրեց, նորից վիճեց ու նորից զարմա-
ցավ, մինչև ծնվեց պարոն Դյուրանի բանա-
ձևը՝ «Ձեր փոքր երկիրը զարմանքների մեծ
հանրապետություն է»:

Որեմն, մինչև Էջմիածին այցելելը, պատ-

վիրակությունը արդեն եղել էր Գեղարդում՝ ժայռերի արտի մեջ հավատքի, տաղանդի ու համբերության բրիչով հրաշակերտված տաճարում: Այցելել էր Մատենադարան՝ գրչագիր մատյանների իմաստուն աշխարհի: Լսել էր մեր այրուքների ստեղծման ու հայ դարության սկզբնավորման հրաշապատումը: «Մշո ճաղընտիրի» օրինակով ծանոթացել էր մատյանների «անհատական» և «հավաքական» ճակատագրին, ունկընդրել դրանց ստեղծման ու ոչնչացման, փրկման ու փրկագնման հաճախ ողբերգական ու միշտ հերոսական պատմությունները: Կանգնել էր Մատենցի Դավթի արձանի առաջ, դիտել ազատության և արդարության համար պատանհի դյուցազնի բարձրացրած Թուր Կայծակին, ինչպես նաև համբերության թաւը, որ լիքը լցված թափվում էր: Եվ, ահա՛, այստեղ էլ ծնվել էր պարոն Դյուրանի ցասկոտ եզրահանգումը. «Ի՞նչ արած, պետք է թափվի, երբ այսքան լցվել է...» և անմիջապես էլ ավելացրեց. «Թող զան, թող տեսնեն անցած ու գալիք բոլոր մարս մեղիքները, որ պատյան չունի արդարության սուրը...»: Պատվիրակությունը հիացել ու լիացել էր Մարյանի աշխարհը ջերմացնող գույներով, լսել Հակոբ Հակոբյանի կտավներում խորհող-բեղմնավորող մեծ լույությունը, բարձրացել էր Ծիծեռնակաբերդ՝ հայ ժողովրդի մեծ անհատակության և զարմանահրաշ վերածննդի հուշահամալիրը, ապա իջել, նայել էր ժողովրդի նորօրյա նվաճումների ցուցահանդեսը և այս անգամ պարոն Բյուֆոնի բերանով ցրնծագին գոչել. «Ա՛յ, սա իսկական պատասխան է բոլոր նրանց, ովքեր մահ նյութեցին և դավեցին ձեզ»:

Եվ, ահա, այսպիսի տպավորություններով բեռնավոր, գնում ենք Էջմիածին ծանոթանալու հայ ժողովրդի հոգևոր կյանքի պատմական կենտրոնին, հանդիպելու Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին:

Առավոտյան, երբ հայտնեցի, թե այսօր լինելու ենք Էջմիածնում, առաջինը պարոն Բերտրանը նկատելի ճիգով վանկարկեց Էջմիածին անունը և հարցրեց.

— Երկի բարդ բառ է. իսկ ի՞նչ է նշանակում:

— Ծիշտ կոահեցիք,—ասացի,— բարդ բառ է և նշանակում է տեղ, վայր, ուր իջել է Միածինը՝ Բրիստոս:

Ես կարճատոտ պատմեցի Գրիգոր Լուսավորչի տեսիլքը: Միածինը երկնային լույսերի պայծառ հեղեղի մեջ իջնում է ամպերից և ձեռքի ոսկե ոտով ծեծում—նշանակում այն տեղը, ուր պետք է կառուցվեր քրիստոնյա առաջին տաճարը: Եվ

Գրիգոր Լուսավորչին կոչ է անում ի լուր հայոց աշխարհի. «Եկա՛ք շինեցուք սուրբ զխորանն լուսոյ»: Եվ նորահավատ թագավոր, իշխան ու ժողովորդ, իրար եկած, կառուցում են «լուսոյ խորան» տաճարը:

Էջմիածին քաղաքի մուտքին, ճի՛շտ այնտեղ, ուր աջից Հոփսիսմեն, իսկ ձախից Մասիսներն են կոթողվում դեպի երկինք, մեր հյուրերը խնդրեցին կանգնեցնել մեքենան: Իջանք: Պատմեցի հայոց Տրդատ թագավորի հրամանով Հոփսիսմյան կույսերի անհատակության, յոթերորդ դարի շինարար, բանաստեղծ ու երաժիշտ կաթողիկոս Կոմիտասի և անհատակ կույսերի հիշատակը հավերժացնող նրա «Անձինք նուիրեալք» բանաստեղծության մասին:

Երբ բառացի թարգմանությանը վերահասու եղան պատկերի բովանդակությանը, առաջինը լույությունը խզեց պարոն Բյուֆոնը.

— Սքանչելի՛, վե՛մ ինքնագոհաբերում, որ, սակայն, նույնքան սքանչելի արվեստով մարմնավորվել է, ահա՛, ձեր քարերի ու ձեր բառերի մեջ...: Պարոններ, ես անկեղծորեն չգիտեմ, հավատա՞մ արդյոք իմ աչքերին, որ մենք՝ հեռաբնակ օտարականներս, հիմա գտնվում ենք բիրիական Մասիսների և ինքնագոհաբերման հանձարեղ կոթող Հոփսիսմե տաճարի արանքում, նրանց այսքա՛ն մոտիկ, Աստված իմ, հավատա՞մ...»:

Մեր մեքենան շարժվեց առաջ: Բայց քանի թույլ ու քանի քայլ: Պարոն Դյուրանը խնդրեց նորից կանգնեցնել: Աջի վրա, փողոցին զուգահեռ, փոքրիկ, նեղիկ այգի էր, թուփ ու ծաղիկներ, նրբակերտ ջրավազան ու մշտամրմունջ ցայտաղբյուրներ, հիշատակի քանդակված պատ ու հուրհրացող հավերժական կրակ՝ մեծ հայրենակամում զոհված Էջմիածնեցի մարտիկների հիշատակին: Հյուրերը հանեցին գլխարկները, կանգնեցին ինքնամիտի: Պարոն Դյուրանը լսելի մրմնջում էր. «Զարմալի է, շա՛տ զարմանալի. անհատակության, ինքնագոհաբերման շղթան ո՛չ մի թույլ ու ո՛չ մի տեղ չի ընդհատվում. մի թույլում, Հոփսիսմեից այստեղ, տասնվեց դար անցանք ու նորից «իմացեալ մահ» ու նորից ինքնանվիրում հանուն հավատքի ու հայրենիքի ազատության. Ո՛վ գիտե, թե ի՞նչ նոր Հոփսիսմեներ ու ի՞նչ նոր «Անձինք» գարող էին ստեղծել այս մարդիկ և սակայն, սպանվեցին:

Մայրավանքի գլխավոր դարպասը անմիջապես գրավեց հյուրերի ուշադրությունը:

Կիրիկյան Հայաստանի IX—XII դարերի

նշանավոր մայրաքաղաք Անիի մոտերքում գտնվող Հոռոմոսի վանքի հայթայթամարի մանրակերտն է՝ շատ փոքր փոփոխությամբ,—բացատրում են,—կառուցվել է վերջերս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի մտահղացմամբ ու հրամանով:

— Գևորգյան ճեմարանը,—ասում է պարոն Դյուրանը,—հազիվ էր բերել մեզ համեմատաբար մոտիկ 19-րդ դարը, երբ, ահա՛, ձեր Հայրապետի լուսավոր մտահղացումը հաճելիորեն ստիպում է մեզ հազար տարով ետ գնալ: Այո՛, ետ գնալ տեսնելու, համոզվելու համար, որ ժողովրդի պատմությունը ուրիշ բան չէ, եթե ոչ նրանց կյանքում տեղի ունեցած առանձին դեպքերի և իրադարձությունների ահա այսպիսի ոսկյա օղակներով իրար ամրորեն գոդված մի անվերջ շղթա:

Եվ ցուցամատը ուղղելով դարպասի կամարի տակից երևացող Մայր տաճարի գրմբեթին, հարցնում է.

— Իսկ երբ անցնենք այս մի քանի քայլ ու հասնենք Մայր տաճար, քանի՞ դարով ետ ենք գնալու:

— Նախորդ հազարից հետո ևս յոթ հարյուր տարի,—ժպտում են ես ու շարունակում,—եթե դուք չեք հոգնել մեր պատմության ժամանակների մեջ ետ ու առաջ վազվզելուց, մենք էլի մի հազար տարով ետ կգնանք, ձեզ իջեցնելով Մայր տաճարի հիմքի մոտ, ուր վերջերս հայտնաբերվեց հեթանոսական մեհյան (մ.թ.ա. 5—4-րդ դարեր) նվիրված հայոց Միհր աստծո պաշտամունքին:

Հյուրերը սիրով համաձայնվեցին: Թանգարանի միջով իջանք Ավագ խորանի տակ և մեր աչքերի առաջ բացվեց մոտ երեք հազարամյա անցած-գնացած մի աշխարհ ու քաղաքակրթություն: Իրարից անկախ պարոն Դյուրանն ու իր օգնականները լուռ երկյուղածությամբ մատնեղ քսում էին պատերի քարերին՝ արդյո՞ք իրական է այս բոլորը: Իրական էր, շոշափելի այնպես և այնքան, ինչքան այս կոշտ-անտաշ քարերը, որ մեհյանի հիմքն են եղել... Լուռ, անխոս հավաքվեցինք ատրուշանի շուրջը, որ քար ու կրով շինած բոլորածն էր, մոխիր այնտեղ: Հազիվ էի հայթայթարում մատով մոխրին դիպչելու գայթակրությունը: Ինձ թվաց, որ պարոն Դյուրանը նույնպես վառվում է այդ ցանկությունը: Երեք հազար տարի...: Ու պատկերացնել, որ մեր նախնիները, ինչպես մենք, բոլորվել են այս նույն ատրուշանի շուրջը և զոհեր մատուցել Միհր աստծուն...:

Դուրս ենք գալիս Մայր տաճար: Միջօրեի զվարթ արևալույսը ներս էր թափանց-

ցել հարավակողմ պատուհաններից, գմբեթից ու խայտանք տվել հանդիպակաց կամարների ու պուների «ծաղկունքին»: Խունկի թանձրացած բուրմունքը կանգնել-մնացել էր տաճարում: Հանգած՝ խոկում էին շահերը: Մրոտած շրջանակների մեջ սպասում, տագնապում էին սուրբերը: Խորանի վերևում, կարծես արսի գուլաներից առկախ, ի՞նչ էր մտածում ցավա՛ծ, անո՛ւշ մեր Տիրամայրը:

Պարոն Բյուֆոնը նկատում է.

— Ձեր Մադոննան իսկական հայուհի է: Նա չի ցուցադրում իր վիշտը, այլ ապրում է, և արդյոք այդ չէ պատճառը, որ շատ է հուզում: Պարզ նկատվում է, որ դուք ամեն ինչի վրա դնում ենք ձեր ազգային դրոշմը, և դա սքանչելի է:

— Այո՛,—ասում են ես,—մենք այդպես ենք վարվում մեր պատմության ու ճակատագրի հրամանով:

Մեր ընդունելությունը Վեհափառի մոտ նշանակված էր ժամը 14-ին: Ուստի դեռ ժամանակ կար դիտելու մայրավանքի մյուս հուշարձանները: Հյուրերը նախ մոտեցան Մայր տաճարի ելքի աջ ու ձախ կողմերում գտնվող կաթողիկոսների շիրիմներին և խնդիրեցին թարգմանել տապանագրերը: Թարգմանեցին: Ուշադիր լսեցին: Հետո հարցե՛ր, հարցե՛ր ու մտորումնե՛ր: Պարոն Բերտրանը, որ պատմաբան էր, կարծես ամփոփեց, ընդհանրացրեց գրույցը.

— Եկեղեցական հայրերին տրված «Հայոց հայրիկ», «պաշտպան հայրենյաց» և «նվազող վշտին հայոց» հայրենասիրական հուզիչ բնորոշումները անկեղծ զարմանք են պատճառում ինձ: Նման երևույթի հազվադեպ կարելի է հանդիպել ուրիշ ժողովուրդների պատմության մեջ: Այստեղ ևս զգացվում է ազգի դրոշմը, կամ, ինչպես դուք եք ասում, ձեր պատմության ու ճակատագրի դրոշմը: «Հայոց հայրիկ», «պաշտպան հայրենյաց», «նվազող վշտին հայոց»: Ինչքա՛ն պարզ, մտերիմ և միաժամանակ ինչքա՛ն վեհ ու հերոսական է հնչում: Պատկերացնո՛ւմ եք, ո՛չ թե մեկի, հինգի ու տասի, այլ ամբողջ մի ժողովրդի «պաշտպան», «վշտի երգիչ» ու «հայրիկ»: Ինչքա՛ն մարդկային, ինչքա՛ն հայրենասեր, ինչքա՛ն նվիրված պիտի լինեին այդ Աշտարակեցին ու Խրիմյանը, որ ժողովուրդը հավաքաբար այդպես վերաբերվեր նրանց, նույնիսկ մահից շատ տարիներ հետո: Երանելի է այն ժողովուրդը, որ այսպիսի պաշտպաններ է ունեցել:

— Եվ ունի՛,—ավելացրի ես:

Մոտենում ենք Խրիմյան հայրիկի շերեփի առածը մարմնավորող հուշակոթողին:

Թևաձալ ևստած բազալտե արծիվ, ներքե-
վում, ձախ թևի տակ, քարի մեջ փորված
հարիսայի կաթսան է, ուր, մի փոքր թե-
քությամբ, իջել է բազալտե նախշագարդ
կոթով հայոց ավանդական շերեփը: Հայ-
րիկը այս առակը հորինել-պատմել է 1878
թ. Բեռլինի վեհաժողովից վերադառնալուց
հետո, ուր, իբր հայոց պատվիրակության
ղեկավար, գնացել էր մեծ տերություննե-
րից իր ժողովրդի համար ազատություն և
արդարություն հայցելու: Ահա առակը այն-
պես, ինչպես պատմել է Հայրիկը ինքը.

«Գնացի Եվրոպա ձեզ ազատություն քե-
րելու և ինչ տեսա այնտեղ: Բեռլինում դըր-
ված էր մի մեծ պտուկ, մեջը լիքը հարիսա:
Գալիս էին զանազան ազգերի պատվիրակ-
ներ երկաթե շերեփներով և հարիսայից
վերցնում ու գնում...»

Կարգը գալով մեզ հայոցս, ես ալ ձեռ-
քիս աղերսաթուղթ ցուցնելով աղաչեցի, որ
ամառն լնուն հարիսա: Այնժամ կաթսայի
գլուխ կանգնած մեծավորները ինձ հարցու-
ցին, թե ո՞ւր է քո շերեփը: Հիրավի հոս
հարիսա կբաժնվի, բայց շերեփ չունեցողն
չի կարող անոր մոտենալ...

Այնժամ դարձրի իմ երես և իբր թե
կփնտրեի իմ գեթունցի և մշեցի քաջերս,
ո՞ւր էին, պետք չէ՞ր որ անոնցմե մեկ-եր-
կու հոգի ալ իմ քովս գտնվեին և անցա ար-
յունոտ թուրերը Եվրոպացոց աչքը խոթելով
բացարձակ աղաղակեի, թե տեսեք, ահա
հո՞ւ է շերեփը: Բայց չկար... Մի աղերսա-
թուղթ ունեի ձեռքիս, ան ալ թղթից, ու հա-
րիսին մեջ մնաց... Ծերեփների մասին
մտածեցեք:

Վեհաժողովի դռան վրա գրված էր, իրա-
վունքը ուժովինն է, քաղաքագիտությունը
գթություն չունի, իրավունքն ալ սուրի ծայ-
րին է: Հայաստանցիներ, սիրեցեք երկաթը,
ձեր փրկությունը երկաթով կլինի»:

— Առակը,—ասում է պարոն Բերտրանը,
—անշո՛ւշտ խորիմաստ է և հայրենասիրու-
թյան, ժողովրդական պարզ ու պատկերա-
վոր մտածողության եզակի մի նմուշ: Մա-
կայն, մեզ համար, զարմանալին այն է, որ
քաղաքական մեծ լիցքի այս առակը հորի-
նել ու պատգամել է ոչ այլ ոք, քան Եկե-
ղեցու բարձր սպասավորը և Եկեղեցու
բարձրաստիճան մի ուրիշ սպասավոր, մեր
օրերում, այն վերածել է քարե կոթողի և
որպես հավերժ հիշեցում դրել սերունդների
աչքի առաջ...:

Հասել էր մեր ընդունելության ժամը: Ան-
ցանք «Դուռն Տրդատա» կոչված կամարի
տակով:

— Այս կամարի տակով,—ասում է պա-
րոն Բյուֆոնը,—անշո՛ւշտ անցած կլինեն

շատ նշանավոր պատմական անձնավորու-
թյուններ, բայց հետաքրքիր է իմանալ, թե
նրանցից ո՞վ է եղել առաջին անցնողը:

— Նախ ասեմ,—նկատեցի ես,—որ հաղ-
թականարը կառուցել է հայոց Տրդատ մե-
ծագոր թագավորը 301—304 թվականնե-
րին քրիստոնեությունը Հայաստանում պե-
տական կրոն հռչակելու առթիվ: Ուստի ար-
քայատոհմով և պաշտոնական շքախմբով
թափոր կազմած՝ առաջինը Տրդատը ինքն
է անցել այս կամարի տակով, մտել Մայր
տաճար և ծնրադրել իր նոր Աստծուն, որին
դեռ երեկ հայածում էր միապետի դաժան
խստությամբ:

— Ուրեմն,—ասում է պարոն Դյուրանը,—
քրիստոնեության առաջին պաշտոնական
հաղթանակի առաջին հաղթականարն է:
Ուստի, բարեկամներս, սա պատմական
կառույց է ոչ միայն ձեզ, այլ համայն քրիս-
տոնյա աշխարհի համար: Ձեր Տրդատ թա-
գավորը գիտակցե՞լ է արդյոք, որ անցնելով
այս հաղթականարի տակով, փաստորեն
կատարել է քրիստոնեական կրոնի համաշ-
խարհային տիրապետության բացման փա-
ռահանդեսը չորրորդ դարի արշալույսին:
Եվ զարմանում եմ, թե ինչու բարձրաձայն
չի խոսվում պատմական այս փաստի մա-
սին:

Վեհաբանում մեզ առաջնորդեցին երկ-
րորդ հարկ: Եղանք զահադահլիճում: Ընդ-
րորը տարբեր դարերի և տարբեր կաթո-
ղիկոսների հին-հին զահաթոռներ են, որ
խորհրդանշում են կաթողիկոսական իշխա-
նությունը: Կաթողիկոսների 129 սերունդ է
անցել այս զահերի վրայով: Վազգեն Ա.
Հայրապետը Մայր Աթոռի 130-րդ զահա-
կայն է: Դահլիճում ամբողջովին մարմարից
միակ զահաթոռը Վազգեն Ա. Հայրապետի
մտահղացումը և նվերն է Մա-ր Աթոռին:
Այն իրավամբ խորհրդանշում է Գրիգոր
Լուսավորչի ձեռքով հիմնադրված պատմա-
կան այս Աթոռի վեհության և անասա-
նության գաղափարը:

Դիտեցինք դահլիճի ամբողջ հյուսիսային
պատը զարդարող վիթխարի գոբելենը:
Ծատ սեղմ պատմեցի 451 թվականի Ալա-
րայրի ճակատամարտի մասին: Պարոն
Բյուֆոնը, արվեստներին մոտիկից առնչվող
մարդ, թույլտվություն խնդրեց, մոտեցավ
գոբելենին, ձեռքով նրբորեն շոշափեց այն
ու զարմացած հարցրեց.

— Որտե՞ղ է գործված. զարմանալիորեն
շատ է հիշեցնում գոբելենի ֆրանսիական
դպրոցը:

— Դուք ճիշտ կուհեցիք,—ասացի,—
գործված է ձեզ մոտ, Փարիզի մի շատ հին
արվեստանոցում, ձեր մասնագետների հը-

մոտ ձեռքերով ու Լիոնի բուրդ ու մետաքսով: Հետևաբար, այս հրաշալի ստեղծագործությունը հայ-ֆրանսիական մշակութային համագործակցության պատմության մնալուն էջերից մեկն է նաև:

Հյուրերը երկար կանգնեցին «Վարդանանք»-ի առաջ, նկատեցին, իմաստավորեցին շատ մանրամասներ, խորհրդածեցին նկարչի ինքնատիպ մտահղացումների, համարող երևակայության, շատ ամուր գծագրի և, անշո՛ւշտ, նրա գլխավոր ասելիքի մասին: Պարոն Բյուֆոնը ճիշտ նկատեց, որ նկարիչը Ավարայրի այս մեկ ճակատամարտի մեջ ի մի է բերել հայ ժողովրդի մղած կենաց և մահու բոլոր ճակատամարտերը, ոտքի է հանել ողջ ժողովուրդը, աշխարհիկ ու հոգևոր բոլոր դասերն ու դասակարգերը:

— Տեսե՛ք,—ասում է նա,—Վարդան Մամիկոնյանից ու Ղևոնդ Երեցից մինչև Խրիմյան Հայրիկը, Վ. Սարոյանն ու նկարիչն ինքը քանի՞ սերունդներ են մասնակցում ազատագրական այս երթին, որ կամավոր է, սիրահոծար, որ թելադրված է մասնակիցներից ամեն մեկի վիրավորված ինքնահիրությունից, պատվով գոյատևելու ներքին մղումից: Եվ կարգախո՛ւք. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն»: Ուստի, հոծարակամ, խնդուն և անկասելի է երթը...»:

Վերջապես մենք Վեհարանի այն սրահում ենք, որի հաստաբետտ պատի մեջ ամրակայված գանձարկղում է պահպանվում ու ցուցադրվում մեր գանձերի գանձը, մեր սրբատառ այբուբենը: Այս մասին ես չէի պատմել մեր հյուրերին: Նրանք պատը ծածկող վարպետյրի դեմ կանգնած, չգիտեին, թե ինչ պետք է տեսնեն: Եվ, ահա՛, ետ գնաց վարագույրը, փափուկ ու խորհրդավոր չխչխկացին բանալիները, բացվեց ծանրածանր դուռը և հուրհրատող, բոցկտացող լույսերի առատության մեջ երևաց հայոց ոսկեծուլ այբուբենը... Ես չիմացա, թե ի՞նչ կախարդանք էր այդ, որ ծնկի բերեց մեր հյուրերին: Ու հիմա, ապշահար ու խոնարհ, պարոն Դյուրանն էր, որ ի խորոց սրտի մրմնջում էր,—«Տեր իմ Աստված, այս ի՞նչ վեհաշուք պատիվ է սեփական այբուբենին, ի՞նչ հանճարեղ մտահղացում...»:

Հետո հյուրերը ավելի մոտիկից, ավելի մանրագնին դիտեցին մեարդայան երեսունվեց նշանագրերը առանձին-առանձին. բոլորն էլ ազնիվ ոսկուց ու թանկարժեք պեպես քարերով «միևս արած» և այնպես նրբագեղ, այնպես շնորհաշուք, որ յուրաքանչյուր նշանագիր առանձին դարձել է մի

փոքրիկ գեղեցիկ ստեղծագործություն: Պարոն Բյուֆոնը խորասուզված նայում էր ու հարցնում.

— Իսկ մարդկային ձեռք, այնուամենայնիվ դիպել է սրան...

Իջանք առաջին հարկ: Մի երիտասարդ վարդապետ մեզ առաջնորդեց ընդունելության սրահ: Մի երկու թուպե լուռ սպասման մեջ էինք, երբ բացվեց դուռը ու գավազանակիր վարդապետի ուղեկցությամբ, անձայն-անշուշտ, ներս մտավ Հայրապետը: Իր առօրյա աշխատանքային հանդերձանքով էր: Խաղա՛ղ, անո՛ւշ նայեց մեզ, մեղմաձայն ողջունեց ֆրանսերեն լեզվով ու հրավիրեց նստել: Հետո, էլի ֆրանսերենով, հարցուփորձ արեց ճամփորդությունից, պաշտոնական առաքելությունից, Փարիզից, ընտանիքից ու կարոտից, անշո՛ւշտ նաև Հայաստանում տեսած-լսածներից: Ոգևորված պարզ ու մտերիմ վերաբերմունքից, պարոն Դյուրանը դիմեց Հայրապետին.

— Ձերդ Սրբություն, շրջագայելով Հայաստանում, ձեր հին ու նոր պատմության դարերի մեջ, մենք իմացանք ցնցող իրողություններ, տեսանք անմոռանալի հուշարձաններ, ծանոթացանք եզակի մտահղացումների ու մեծարժեք իրագործումների: Այս ամենը մեր մեջ հարուցած ինչուներից և ինչպեսներից փորձում ենք ինքներս գոյիս հանդ մեր հայ բարեկամների օգնությամբ, իսկ, ահա, հայերեն այբուբենը ոսկելույս հուշարձանի վերածելու եզակի մտահղացման հանգամանքների մասին խոնարհաբար կցանկանայինք իմանալ, եթե, կարելի է, անձամբ Ձերդ Սրբությունից:

— Գնահատելի կզտնենք Ձեր հետաքրքրությունը, ուստի, սիրահոծար կբացենք մեր «գաղտնիքը»:

Տարիներ առաջ, մի օր, ինձ հայտնեցին, թե մի հայ մայրիկ ցանկանում է տեսնել ինձ: Հրավիրեցի: Վաթսունի մոտ կին էր: Արցունքը աչքերին հայտնեց, որ մի փոքրիկ ավանդ ունի անձամբ ինձ՝ Հայոց Հայրապետին հանձնելու: Ծոցից հանեց մի շատ հին բազմահանգույց թաշկինակ, դժվարությամբ քանդեց, երկյուղածությամբ շրթներին տարավ ու դրեց սեղանին: Երկու հատ ականջի օղ էր, երկու հատ ծոնոված մատանի ու մի հատ կոտրված-ճզմված փոքրիկ խաչ, բոլորն էլ ոսկի: Մինչ ես հարցական նայում էի, մայրիկը այտերն ի վար հոսող արցունքների միջից ասաց.

— Վեհափա՛ռ, տարագրության ճանապարհին, երբ մեռնում էր մայրս, ինձ հանձնարարեց սրանք հատկացնել մի բարի, մի սուրբ նպատակի: Տարիներ տևած մեր գող-գողայի ճանապարհին կրեցինք անպատ-

մեկի տառապանքներ՝ հիվանդություն, սով, ծարավ, խոշտանգումներ, սակայն մայրական այս ավանդին ձեռք չտվեցինք: Ահա, Վեհափառ, սրանք համարեք մեր նահատակ մոր փոքր լուման և օգտագործեցեք մի սուրբ նպատակի:

Ես, հուզված, նայում եմ մեր ժողովրդի դառը ճակատագրի ճամփաներով անցած փոքրիկ ոսկի իրերին և անօգնական հարցնում.

— Այնուամենայնիվ, մայրի՛կ, ի՞նչ անեմ, Դուք հատկապես ի՞նչ կցանկանայիք:

— Ձեր կամքն է, Վեհափառ,—ասաց մայրիկը:

Պատասխանը ոչինչ չհուշեց. օրեր, ամիսներ, մի ամբողջ տարի ես անճրկած ու մոլոր մտածում էի՝ ի՞նչ անել: Մի գեղեցիկ խաչքա՛ր կամ աղբյուր-հուշարձա՛ն կառուցել, որ հավերժ կարկաչի նրա նահատակ մոր հիշատակին: Տատանվում, երկմտում էի: Ու մի օր էլ, աշխատելուց հոգնած, երբ վեր առի գլուխս, նկատեցի, կարծես առաջին անգամ, գրասեղանիս անկյունում դրված ահա այս փոքրիկ մանրակերտ կոթողը, ստեղծված 1911-ին Պոլսում հայ գրերի գյուտի 1500-ամյակի տոնակատարության օրերին: Հանկարծ, կարծես տեսիլքի մեջ, ուրվագծվեց գաղափարը: Ինչո՞ւ չստեղծել ավելի տեսանելի, ավելի խոսուն ու ամբողջովին ոսկեձուլ մի հուշարձան ի պատիվ մեր սրբատառ այբուբենի և դնել սերունդների աչքի առաջ իբրև հավերժ ուսանելի դաս ու դասագիրք: Մեծածախս այս գաղափարի իրականացման համար մայրիկի ոսկե լուման անշուշտ շատ փոքր էր, գրեթե աննշան մի բան, բայց, մտածեցինք, որպես բարի թոթամոր միանգամայն բավարար՝ իմաստավորելու մինչ այդ մեր տրամադրության տակ եղած և դեռ անանուն ու որոշակի նպատակ չունեցող ավելի մեծ այլ նվիրատվություններ: Եվ, այսպես, մայրիկի ոսկե լուման բարի թոթամոր դարձրած՝ գործի սկսեցինք: Ծուտով մեզ օգնության եկան ճարտարապետ, նկարիչ ու տոհմական ոսկերիչ, բոլորն էլ հմուտ, նվիրում ու տեսիլք ունեցող հայրենասեր մարդիկ, ու մարմին առավ նահատակ հայ մայրիկի վերջին ցանկությունը և մեր տեսիլքը:

Դուրս եկանք Վեհարանից: Հյուրերը գնում էին անխոս, ինքնասույգ: Թվում էր,

ամեն մեկը իր հիշողության մեջ կարգի էր բերում այս երկու ժամում տեսած-խածնե-րը: Երբ Զվարթնոցի արծիվն էլ թողեցինք մեր ետին, պարոն Դուրանը բացվեց.

— Ինչպես գիտեք,—ասաց նա,—վաղը առավոտ շուտ մեկնում եմք: Մեր հոգիները լի են տպավորություններով: Մեկնելուց առաջ ներքին անհրաժեշտություն եմ զգում խոսել իմ տպավորությունների և առաջին եզրահանգումների մասին:

Ձեր ժողովուրդը, որքան հին-հնամյա, զարմանալի է, նույնքան էլ ջահել է, կենսունակ, ստեղծելու կրթով առլեցուն: Ձեր այսօրվա Սովետական Հայաստանը խոսուն վկայությունն է այդ բանի: Եզակի են Արարատը, Հոփիսիմեն, ձեր գրապաշտությունն ու հյուրասիրությունը: Ձեր եկեղեցին միայն «սուն աղօթից» չի եղել, այլ «ամբողջ հայրենեաց», իսկ ձեր եկեղեցական հայրերը որքան խոնարհ սպասարկու եկեղեցու, նույնքան և ավելի՝ «հովի քաջ հայոց հոտին»: Ձեր ժողովրդի և ձեր գրչագիր մատյանների ճակատագրերը, հաճախ նույնական, եզակի են, իսկ «Ծառընտիրի» պատմությունը՝ ամենահուզիչը աշխարհում: Սեփական այբուբենը ոսկյա հավերժական հուշակոթողի վերածելու լուսավոր մտահղացումը հմայել է մեզ: Դրանով դուք խաղաղ, բարի օրինակ եք տվել ատոմական սարսափով համակված աշխարհին: Հանդիպելով Վազգեն Ա. կաթողիկոսին, մեզ թվում է, որ մենք հանդիպեցինք ձեր իմաստուն ու հայրենասեր հայրապետներին Սահակ Պարթևից մինչև երկաթե շերեփի հանճարեղ առակախոս Խրիմյան Հայրիկը ու համոզվեցինք, որ պետք է ճշմարտապես պարզ լինել, վեհ ու վսեմ լինելու համար...

Կմեկնենք մեծապես հարստացած ձեր հինավուրց պատմության և մեծարժեք մշակույթի իմացությանը և ջերմացած ձեր երկրից, ձեր Արարատից, ձեր ժողովրդից ճանազող բարեկամության լուսավոր զգացումներով: Մեզ կրկնապատիկ ուրախություն է պատճառում այն փաստը, որ ինչպես խոր անցյալում, այնպես էլ այսօր դուք շարունակում եք ձեր ոսկե լուման մուծել մարդկության քաղաքակրթության գանձարանի մեջ:

ՍԱՐԳԻՍ ՅԱՓՈՒԶՅԱՆ